

ՄԱՍ I
SECTION I

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

2008-2012

ANNUAL NATIONAL ACCOUNTS
OF ARMENIA

Նախարան

Սույն ժողովածուն հանդիսանում է Հայաստանի ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ), ինչպես նաև դրա հետ կապված մոդելների և ցուցանիշների 2008-2012թթ. տարեկան և 2009-2013թթ. եռամսյակային տվյալների վերաբերյալ ամբողջական հրատարակություն:

Ժողովածուն պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական տեղեկատվության, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներից, այլ կազմակերպություններից, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և բնակչությունից ստացված տվյալների հիման վրա՝ վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման և մշակման, ընտրանքային հետազոտությունների անցկացման, այլ վիճակագրական դիտարկումների, ինչպես նաև «չդիտարկվող տնտեսության» լրահաշվարկների միջոցով, այն ոլորտներում, որտեղ տեղեկատվական բազան ամբողջությամբ ապահովված չէ:

Ազգային հաշիվների որակի կարևորագույն հատկանիշ է հանդիսանում տնտեսական գործունեության բոլոր տեսակների ամբողջական ընդգրկվածությունը: Սակայն, դժվար է հասնել լրիվ ընդգրկվածության՝ պայմանավորված հիմնական տվյալների հավաքագրման համակարգի թերություններով և արտադրական գործունեության որոշ տեսակների վերաբերյալ տվյալների հաշվառման բարդություններով (սովերային, ոչ ֆորմալ, անօրինական գործունեություններ):

Սկզբնական տեղեկատվությունը խմբագրվում, ամփոփվում է տնտեսական գործունեության տեսակների վիճակագրության մակարդակներով և, որպես հիմնական տվյալներ, մուտքագրվում է ազգային հաշիվների համակարգ: Ազգային հաշիվների կազմման գործընթացում բացակայող տվյալները լրացվում են (լրահաշվարկվում են չդիտարկվող տնտեսության մասով), իսկ անհամաձայնությունները՝ վերացվում:

Լրահաշվարկները և ճշգրտումները կատարվում են տնտեսական գործունեության տեսակների վիճակագրության (միկրոէկոնոմիկա) և ամբողջ տնտեսության (մակրոէկոնոմիկա) մակարդակով:

Լրահաշվարկների և ճշգրտումների հիմքում դրված են տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի և կանոնավոր վիճակագրական հաշվետվությամբ հաշվառվող աշխատողների թվաքանակի վերաբերյալ տվյալները: Բացի դրանից, օգտագործվում են աշխատուժի, տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալները, ինչպես նաև տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների համեմատական վերլուծության վրա հիմնված գնահատման անուղղակի եղանակները: Դրա հետ մեկտեղ, հաշվի են առնվում նաև հատուկ հետազոտությունների, հարցումների արդյունքները և այլ տեղեկատվություն:

Ազգային հաշիվները, արտացոլելով տնտեսական ակտիվների հոսքերի հիման վրա հաշվարկված ապրանքների և ծառայությունների արտադրության ու օգտագործման գործընթացները, ընդհանրացնող պատկերացում են տալիս որոշակի ժամանակաշրջանում տնտեսության գործունեության վերաբերյալ: Հայաստանի ազգային հաշիվների կառուցման համար հիմք է հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Համաշխարհային բանկի, Եվրոպական համայնքների հանձնաժողովի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից որպես միջազգային չափորոշիչ ընդունված ԱՀՀ-93¹, ինչպես նաև Եվրամիության ԵՀՀ-95² մեթոդաբանությունները:

Վիճակագրական ժողովածուի մեջ մանրամասն ներկայացված են Հայաստանի ԱՀՀ-ի 2008-2012թթ. վերաբերյալ տարեկան և 2009-2013թթ. եռամսյակային ցուցանիշները՝ ներառյալ վերջին ճշգրտումները: 2013թ. վերաբերյալ ներկայացված ցուցանիշները նախնական են և ենթակա են վերանայման 2015թ.-ին: Սույն ժողովածուի մեջ, ԱՄՀ տվյալների տարածման հատուկ ստանդարտի³ պահանջներին համապատասխան, ներկայացված են ԱՀՀ հիմնական հասկացությունների և տեսակետների համակարգի մեթոդաբանական պարզաբանումները: ՀՀ ԱՎԾ

¹ Ազգային հաշիվների համակարգ 1993, Բրյուսել/Լյուքսեմբուրգ, Նյու-Յորք, Փարիզ, Վաշինգտոն, 1993թ.

² Եվրոպական հաշիվների համակարգ:

³ Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման հատուկ ստանդարտ (SSZU/SDDS), որին Հայաստանի Հանրապետություն անդամակցում է 2003թ. նոյեմբերի 7-ից:

կողմից կիրառվող համախառն ներքին արդյունքի հաշվարկի առավել մանրամասնեցված մեթոդաբանությունը նկարագրված է սույն ժողովածուի առաջին հրատարակությունում՝ «Հայաստանի ազգային հաշիվները, 1990-1997»:

Սույն ժողովածուն պատրաստված է հանրության և բոլոր շահագրգիռ անձանց հիմնական մակրոցուցանիշների վերաբերյալ սպառիչ, թափանցիկ և մատչելի տվյալներ տրամադրելու նկատառումով:

Ժողովածուն նախատեսվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, միջազգային, գիտական, ձեռնարկատիրական և բանկային ոլորտի, տնտեսագիտական ԲՈՒՀ-երի ուսանողների, ասպիրանտների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի, վիճակագրական տեղեկատվության այլ սպառողների (օգտագործողների) համար, ում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տնտեսության վերաբերյալ մանրամասն և ամբողջական տեղեկատվություն:

Foreword

The given handbook is a complete publication of annual data for 2008-2011 and quarterly data for 2009-2012 of the System of National Accounts (SNA) of Armenia, as well as models and indicators related to it.

The handbook has been prepared based on statistical data of structural units of the National Statistical Service of the Republic of Armenia (NSS RA), as well as based on data received from economic units, other organizations, state, local self-government bodies and population through collecting and processing of statistical reports, conducting sample surveys, other statistical observations, as well as imputations of “non-observed economy” in areas where data sources are not exhaustive.

The most important feature of quality in national accounts is a complete coverage of all types of economic activities. Reaching to a complete coverage is complicated task in respect of issues of registration of definite types of production activity like hidden, non-formal, illegal, as well as lacks of main data collection system.

The primary information at the industry statistics level is edited, aggregated and as main data entered into the system of national accounts. The missing data are added (imputations on non-observed economy) in the process of national accounts compilation, unconformities are removed.

Imputations and adjustments are implemented at the level of industry statistics (microeconomics) and whole economy (macroeconomics).

Imputations and adjustments are based on data of number of employees in the economy and number registered by regular statistical reports. Besides, data on labour force, household surveys as well as indirect estimations based on the comparable analysis of data received from different sources are used. At the same time results of special surveys, interviews and other information are considered as well.

National accounts, reflecting processes of production and use of goods and services calculated based on economic assets flows, give a general idea of economy’s activity for definite period. The compilation of national accounts of Armenia is based on the methodologies accepted as an international standard by the International Monetary Fund (IMF), United Nations (UN), the World Bank, European Commission (EC) and Organization of Economic Cooperation and Development (OECD) and published in 1993 (SNA-93)¹, as well as by European Community - ESA-95².

Annual for 2008-2012 and quarterly for 2009-2013 indicators of SNA of Armenia, including recent adjustments are presented in details in the statistical handbook. Indicators for 2013 are preliminary and will be revised in 2015. Methodological explanations of main concepts and definitions of SNA are presented in the given handbook in accordance with the Special Data Dissemination Standard³.

¹ *System of National Accounts 1993, Brussels/Luxembourg, New York, Paris, Washington, 1993.*

² *European System of accounts.*

³ *International Monetary Fund’s Special Data Dissemination Standard (SDDS). Armenia has become a subscriber to SDDS since 7 November 2003.*

More detailed methodology of calculation of gross domestic product applied by the NSS RA has been described in the first edition of the statistical handbook “National Accounts of Armenia for 1990-1997”.

The given handbook has been prepared with a purpose to provide public and interested persons with exhaustive, transparent and accessible data on main macroeconomic indicators.

The handbook has been intended for state and local self-government bodies, economic units, international, scientific, entrepreneurial and banking circles, students of economic universities, postgraduates and teachers, other users of statistical information, who need a detailed and complete information on economy of the Republic of Armenia.

Հայաստանի ազգային հաշիվներում Ազգային հաշիվների համակարգ 2008-ի (ԱՀՀ 2008) ներդրումը

Սկսած 2014թ.-ից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում աշխատանքներ է իրականացնում «Ազգային հաշիվների համակարգ 1993-ից» «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի»¹ անցում կատարելու ուղղությամբ:

Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ) համակողմանի, փոխկապակցված և ճկուն մակրոտնտեսական ցուցանիշների համախումբ է, որն օգտագործվում է քաղաքականությունների մշակման, վերլուծությունների և հետազոտությունների համար: Ազգային հաշիվների ցուցանիշները (ՀՆԱ, ՀԱԵ, սպառում, խնայողություն և այլն) այն կարևոր չափորոշիչներից են, որոնք օգտագործվում են տնտեսական քաղաքականություն իրականացնողների կողմից՝ պլանավորելու և գնահատելու իրենց վարած քաղաքականությունը, իսկ միջազգային կազմակերպությունների կողմից՝ համադրելու տնտեսական զարգացումները երկրների միջև:

ԱՀՀ 2008-ը ԱՀՀ 1993-ի արդիականացումն է, ԱՀՀ-ի 5-րդ խմբագրությունը, որի առաջին խմբագրությունը հրատարակվել է ավելի քան 50 տարի առաջ: ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովը 2003 թվականին իր 33-րդ նստաշրջանում որոշում կայացրեց արդիականացնել ԱՀՀ 1993-ը՝ սպառողների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Այդ որոշումը պայմանավորված էր նրանով, որ շատ երկրներում տնտեսություններն էական փոփոխություններ են կրել 90-ական թվականների համեմատությամբ, երբ մշակվել էր ԱՀՀ 1993-ը: Բացի այդ, նախորդ տասնամյակում մեթոդաբանության ոլորտում հետազոտությունների արդյունքները հնարավորություն են ընձեռել կատարելագործել մի շարք առավել բարդ հաշիվների բաղադրիչների հաշվարկման մեթոդները: ԱՀՀ-ի վերանայման վերաբերյալ որոշում կայացնելու կարևոր գործոններից է նաև վիճակագրության այնպիսի ուղեցույցների հետ համաձայնեցվածության ապահովումը, ինչպիսիք են վճարային հաշվեկշռի, պետական ֆինանսների, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկները:

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի հանձնարարականին համապատասխան, ԱՀՀ 2008-ը չի պարունակում այնպիսի հիմնադրույթային և համընդգրկուն փոփոխություններ, որոնք կդժվարացնեին ԱՀՀ-ի նախկին խմբագրությունից սահուն անցումը նոր խմբագրության:

ԱՀՀ 2008-ը պատրաստվել և հրատարակվել է միջազգային 5 կազմակերպությունների (Եվրոստատ, ԱՄՀ, ՏՀԶԿ, ՄԱԿ-ի վիճակագրական բաժին և ՄԱԿ-ի քարտուղարության տարածաշրջանային հանձնաժողովներ, ՀԲ) հովանու ներքո և 2009թ. փետրվարին Նյու-Յորքում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 40-րդ նստաշրջանում ընդունվել որպես համընդհանուր ստանդարտ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՀՀ 1993 մեթոդաբանության ներդրման աշխատանքները շատ երկրներում (հատկապես Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ և այլն) դեռևս չեն ավարտվել, ԱՀՀ 2008-ի ներդրման գործընթացը ներառում է նաև ԱՀՀ 1993-ի առանձին բաղադրիչների

¹Ինչը ենթադրում է նաև ԱՀՀ 2008-ի ներդրումը համապատասխան Եվրոպական հաշիվների համակարգ 2010-ի (ԵՀՀ 2010) ձևաչափով:

ներդրման աշխատանքների ավարտ: Դրանք են՝ ծախսեր-թողարկում աղյուսակները, ակտիվների և պարտավորությունների հաշվեկշիռը, ֆինանսական հաշիվը, ինչպես նաև որոշ բաղադրիչների մասով այն մեթոդաբանական զարգացումներն ու բարելավումները, որոնք տեղի են ունեցել ԱՀՀ 1993-ի ընդունումից հետո:

Սույն հրապարակման շրջանակներում հնարավոր չէ մանրամասն անդրադառնալ ԱՀՀ 2008-ով նախատեսված բոլոր փոփոխություններին: Այդ իսկ պատճառով այստեղ տեղ են գտել առավել էական փոփոխությունները, որոնց իրականացումը կհանգեցնի ՀՆԱ-ի ծավալի, կառուցվածքի և իրական աճի, ինչպես նաև ԱՀՀ-ի հիմնական ցուցանիշների փոփոխությանը:

Այդ փոփոխություններից մեկը վերաբերում է **գիտական հետազոտությունների և մշակումների** հետ կապված ծախսերին, որոնց, ըստ ԱՀՀ 2008-ի, պետք է դիտարկել որպես հիմնական կապիտալի կուտակման ծախսեր՝ ԱՀՀ 1993-ով սահմանված միջանկյալ սպառման ծախսեր դիտարկելու փոխարեն: Սույն փոփոխությունը կհանգեցնի այն գործունեության տեսակների համախառն ավելացված արժեքների փոփոխությանը, որոնցում ծախսեր են իրականացվում գիտական հետազոտությունների և մշակումների նպատակով, և որի արդյունքում նաև կփոխվեն ինչպես ՀՆԱ-ի ծավալը, այնպես էլ կառուցվածքն ու իրական աճը:

Մյուս կարևոր փոփոխությունն առնչվում է **սպառազինության ծախսերին** (հրասայլերի, ինքնաթիռների, նավերի և երկարաժամկետ օգտագործման ռազմական այլ օբյեկտների ձեռք բերման ծախսեր), որոնք, համաձայն ԱՀՀ 1993-ի, դիտվում էին որպես պետական կառավարման հատվածի միջանկյալ սպառման ծախսեր, իսկ ըստ ԱՀՀ 2008-ի, պետք է դիտարկել որպես հիմնական կապիտալի կուտակման ծախսեր: Սույն փոփոխությունը չի հանգեցնի արտադրական ՀՆԱ-ի ծավալի, կառուցվածքի փոփոխության, բայց, քանի որ թողարկման և միջանկյալ սպառման ծավալների մշտական գներով (համադրելի) գնահատման դեֆլատորները տարբեր են, այն կհանգեցնի ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի փոփոխության: Փոփոխություն կկրի նաև ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքում վերջնական սպառման և կուտակման միջև հարաբերակցությունը:

Վերոհիշյալ երկու ծախսերի կապիտալացման արդյունքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռում նույն չափով գրանցվում է հիմնական կապիտալի ավելացում ակտիվներում, որն էլ իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում գնահատել այդ կապիտալի սպառման ծավալները՝ ներառելով այն սկզբում թողարկման, իսկ այնուհետև՝ նաև ավելացված արժեքի մեջ: Փոփոխության արդյունքում ևս արտադրական ՀՆԱ-ի ծավալը որոշ փոփոխություն կկրի:

Կենտրոնական բանկի (ԿԲ) գործառնություններից բխող գործառնություններն ազգային հաշիվներում առավել ճիշտ արտացոլելու մեթոդաբանական մոտեցումների հետ կապված բարելավումներն, արդեն իսկ շատ երկրներում, իրականացվել էին դեռևս 2000-ականների սկզբներին, որոնք հետագայում ամրագրվեցին ԱՀՀ 2008-ում: Եթե ԱՀՀ 1993-ով առաջարկվում էր ԿԲ-ն դիտարկել որպես առևտրային բանկ, ապա ԱՀՀ 2008-ը ներկայացնում է ԿԲ-ի գործունեությունը նոր մեկնաբանությամբ՝ տարանջատելով ԿԲ-ի գործառնությունները (դրամային կարգավորում, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն, ֆինանսական միջնորդություն) շուկայականի և ոչ շուկայականի, նախատեսում է դիտարկել դրանք առանձին-առանձին և արտացոլել ազգային հաշիվների համապատասխան բաղադրիչներում: Մակրոտնտեսական կազմավորման գործառնություններ իրականացնող վարչությունների թողարկումը, որը ներառում է գների կայունության ապահովումը, դրամաշրջանառության, փոխարժեքի, արտաբերության պահուստների կուտակման և բաշխման կարգավորումը, ըստ ԱՀՀ 2008-ի, պետք է գնահատել որպես ընթացիկ ծախսերի հանրագումար (ոչ շուկայական գործառնություններ): ԿԲ թողարկման մյուս մասը վերաբերում է իր կողմից առևտրային բանկերին, ինչպես նաև տնտեսության այլ ինստիտուցիոնալ միավորներին մատուցած ֆինանսական ծառայություններին, որոնք պետք է գնահատվեն շուկայական գներով: ԿԲ-ի կողմից մատուցած ծառայությունների օգտագործման մասում մակրոտնտեսական կազմավորման գործառնությունների թողարկումը պետք է դիտարկվի որպես պետական կառավարման մարմինների վերջնական սպառում, իսկ մյուս մասը՝ ֆինանսական միջնորդության ծառայությունների մատուցման մասով, որպես ֆինան-

սական կազմակերպությունների, ոչ ֆինանսական կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների միջանկյալ սպառում:

ԿԲ-ի ոչ շուկայական թողարկումը գրանցվում է տնօրինվող եկամտի օգտագործման մասում որպես պետական կառավարման մարմինների վերջնական սպառում, սակայն իրականում, պետական կառավարման մարմինները այդպիսի ծախսեր չեն իրականացնում: Այդ պատճառով թողարկման այդ ծավալը պետք է գրանցվի որպես ընթացիկ տրանսֆերտ (խառը տրանսֆերտներ) ԿԲ-ից պետական կառավարման մարմիններին, որի հաշվին էլ պետք է ֆինանսավորվի պետության կողմից ԿԲ-ի ոչ շուկայական ծառայությունների գնումները: Գործնականում, շատ դեպքերում, դժվար է տարանջատել ԿԲ-ի շուկայական և ոչ շուկայական թողարկումները: Նման դեպքերում ԿԲ թողարկումը պետք է գնահատել որպես ընթացիկ ծախսերի հանրագումար (ոչ շուկայական), այսինքն՝ միջանկյալ սպառման, աշխատողների աշխատանքի վարձատրության, հիմնական կապիտալի սպառման և արտադրության գուտ հարկերի (հանած սուբսիդիաներ) հանրագումար:

ԱՀՀ 2008-ը նախատեսում է նաև **ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների (ՖՄԱՉՕ)** ծավալի հաշվարկման մեթոդաբանության բարելավում: Եթե ԱՀՀ 1993-ով ՖՄԱՉՕ-ի թողարկումն իրենից ներկայացնում էր ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավման և տրամադրման դիմաց վճարված և ստացված տոկոսավճարների տարբերություն, ապա ԱՀՀ 2008-ով այն հաշվարկվելու է միայն ավանդների և վարկերի հետ իրականացված գործառնությունների մասով՝ հիմնվելով բազային տոկոսադրույքի վրա: Նախատեսվում է նաև վերջինիս բաշխումն ըստ ՖՄԱՉՕ-ի սպառողների՝ միջանկյալ սպառման, վերջնական սպառման և արտահանման բաղադրիչների միջև (ԱՀՀ 1993-ով այն ամբողջությամբ միջանկյալ սպառման բաղադրիչ էր):

Մեթոդաբանական մի շարք փոփոխություններ են իրականացվել նաև կապված **արտաքին տնտեսական գործառնությունների հետ**՝ ազգային հաշիվներում համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) գործընթացներն առավել ճշգրիտ արտացոլման նպատակով: Այդ փոփոխությունները վերաբերում են այնպիսի գործառնություններին, ինչպիսիք են վերամշակման նպատակով ապրանքների արտահանումն ու ներմուծումը, արտերկրում ապրանքների վերավաճառքը, ժամանակավոր ոչ ռեզիդենտ զբաղվածների կողմից դեպի իրենց երկիր «անձնական տրանսֆերտները» և այլն: Այս փոփոխությունները ներդաշնակեցված են Վճարային հաշվեկշռի ձեռնարկի 6-րդ խմբագրության (ԱՄՇ, 2008) հետ:

ԱՀՀ 2008-ի ներդրումն իրականացնելու համար կպահանջվի երկարատև ժամանակաշրջան և լրացուցիչ ռեսուրսներ: Քանի որ ԱՀՀ-ի վիճակագրությունը փոխկապակցված է այլ վիճակագրական համակարգերի (վճարային հաշվեկշռի վիճակագրություն, պետական ֆինանսների վիճակագրություն, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն) հետ, ապա մեկի մեթոդաբանական փոփոխությունը հանգեցնում է մյուսի փոփոխությանը: Վերջինս ենթադրում է, որ ԱՀՀ 2008-ի ներդրումն իրականացնելու համար կպահանջվի խորացնել համագործակցությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և մակրոտնտեսական այլ վիճակագրական համակարգեր վարող գերատեսչությունների, հատկապես ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Ներդրման գործընթացը ներառելու է հետևյալ հիմնական փուլերը.

1. Երկարաժամկետ ազգային ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանների մշակում.

- հիմնական շահագրգիռ կողմերի հետ (ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ ֆինանսների նախարարություն) խորհրդակցությունների անցկացում, առաջնահերթությունների սահմանում, ներդրման գործընթացի կոորդինացում,

- ներդրման ազգային պլանի մշակում ներառելով այն ռազմավարական ծրագրում,

- գործողությունների պլանների մշակում (ըստ տարիների), ներառյալ ռեսուրսների համապատասխանեցումն ու միջազգային տեխնիկական համագործակցության անհրաժեշտության հստակեցումը:

2. Դասակարգումների ներդրում, բիզնես ռեզիստրի, վարչական աղբյուրների տվյալների,

ընտրանքի, տեղեկատվատեխնոլոգիական ենթակառուցվածքների բարելավում:

3. Ազգային հաշիվների կազմման բարելավումներ՝ համաձայն ԱՀՀ 2008-ի և ներդրման պլանի:

ԱՀՀ 2008-ով նախատեսված բոլոր փոփոխությունները զետեղված են ԱՀՀ 2008 ձեռնարկի Հավելված 3-ում (տե՛ս նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝ <http://www.armstat.am/file/doc/99475843.pdf>):

The introduction of the System of National Accounts 2008 (2008 SNA) in Armenia's National accounts

Since 2014, the National Statistical Service of RA in National Accounts Statistics of Armenia is implementing works connected with the transition from the "System of National Accounts 1993" to the "System of National Accounts 2008"¹.

System of National Accounts (SNA) is a comprehensive, interconnected and flexible set of macroeconomic indicators used in policy making, analysis and research. The National accounts' indicators (GDP, GNI, consumption, savings, etc.) are important measures that are used by policy makers to plan and evaluate the implementation of their policy, and by international organizations to compare the economic development among countries.

The 2008 SNA is an updated version of the 1993 SNA. It is the fifth version of the SNA, the first of which was published over fifty years ago. At its thirty-third session in 2003, the UN Statistical Commission requested that the 1993 SNA should be updated to bring the national accounting framework into line with the needs of data users. The background was that the economic environment in many countries had evolved significantly since the early 1990s when the 1993 SNA had been developed and, in addition, methodological research over the past decade or so had resulted in improved methods of measuring some of the more difficult components of the accounts. One of the crucial factors for SNA developments was ensuring its consistency with related manuals, such as those on the balance of payments, on government finance statistics and on monetary and financial statistics.

In accordance with the mandate from the UN Statistical Commission, the 2008 SNA does not contain fundamental or comprehensive changes that would impede a smooth transition from implementation of the earlier version SNA to the new version.

The 2008 SNA was prepared and published under the auspices of five international organizations: the Statistical Office of the European Communities (Eurostat), the International Monetary Fund (IMF), the Organisation for Economic Cooperation and Development (OECD), the United Nations Statistics Division (UNSD) and regional commissions of the United Nations Secretariat and the World Bank, and it was adopted by the United Nations Statistical Commission at its fortieth session on February 2009 in New York as international standard.

Taking into consideration that the implementation of 1993 SNA methodology for many countries (especially in Eastern Europe, CIS, etc.) have not yet been completed, the SNA 2008 implementation process includes also the completion of the implementation of the SNA 1993's for certain components. These are Input - Output tables, balance of assets and liabilities, financial accounts, as well as some of the components of the methodological developments and improvements that have taken place after the adoption of 1993 SNA.

Within this publication it is not possible to reflect all the changes provided in the 2008 SNA. For this reason here are reflected the more significant changes which will lead to the changes of GDP volume, real growth and structure, as well as the SNA's main indicators.

One of these changes is related to **research and development expenses**, which, according to SNA 2008, should be considered as the expenditures of fixed capital formation, instead of intermediate consumption expenditure defined in 1993 SNA. This change will lead to the changes of gross value added in those economic activities which carry out research and development expenses and as a result there will be changes of both the structure and the real growth of GDP.

¹*It supposes also introduction of SNA 2008 in accordance with format of European system of accounts 2010 (ESA 2010).*

Another important change relates to **military expenditures** (tanks, airplanes, ships and costs of acquisition of other military facilities for long-term use), which were regarded as intermediate consumption expenditures of the government according to the 1993 SNA, but according to 2008 SNA, they should be considered as the fixed capital formation expenditures. This amendment will not result to changes of GDP volume and structure by production approach, but because of the differences of deflators for assessment of output and intermediate consumption volumes at constant (comparable) prices, the volume index of GDP will be changed. There will also take place changes in the ratios of the final consumption and capital formation of GDP structure by use side.

As a result of capitalization of both above mentioned expenditures, in the balance sheet of assets and liabilities the capital assets will increase in the same amount, which in turn makes it necessary to evaluate the consumption of capital, at first including it into the output and then in the value added. As a result of this the volume of GDP by the production side will be changed.

The methodological approaches associated with improvements to reflect in the national accounts more accurately the **operations of the Central Bank (CB)** resulting from its functions have been implemented in many countries in 2000s and now are adopted in 2008 SNA. If the 1993 SNA offered to treat the CB as a commercial bank, then 2008 SNA presents the CB functions in new interpretation separating the CB functions (monetary regulation, supervision of financial institutions, financial intermediation) in market and non-market, and intends to consider them separately and reflect in the national accounts.

Output of departments of macroeconomic regulation, which includes price stability, monetary circulation, exchange rate, the settlement of foreign exchange reserves accumulation and distribution, according to 2008 SNA, should be considered as the sum of current expenditure (non-market functions).

Another part of CB output concerns to providing financial services to commercial banks, as well as other institutional units, which is valued at market prices. In the use side of services provided by the CB, the output of macroeconomic regulation services should be viewed as final consumption of general government, while the other part of the financial intermediation services, as intermediate consumption of financial, non-financial and general government institutions.

The non-market output of CB should be registered in the use side of disposable income as final consumption of general government, but, in reality, the general government bodies are not administered such expense. This volume of output should be recorded as current transfers (mixed transfers) from CB to the general government and at the expenses of which should be financed central bank's non-market purchases by government. In many cases, it is difficult to separate the CB market and non-market outputs. In such cases the CB output should be assessed as sum of costs (non-market); intermediate consumption, compensation of employees, consumption of fixed capital and net taxes on production (less subsidies).

SNA 2008 intends to improve the methodology for calculation the volume of **financial intermediation services indirectly measured (FISIM)**. If in the SNA 1993 the output of FISIM was presented as difference between the interests received and paid on that financial institutions providing and attracting financial resources, then in the SNA 2008 it is calculated only with the operations for deposits and loans on the bases of reference rate. Also it is foreseen the distribution of the FISIM between the consumers: intermediate consumption, final consumption and exports (by SNA 1993 it was completely the intermediate consumption component).

A number of methodological changes should be implemented in the **external economic transactions** associated with the more accurate reflection in the national accounts the processes of globalization. These changes are related to operations, such as exports and imports goods for processing abroad or for resale, "private transfers" of temporary employed non-residents to their country and etc. These changes are harmonized with the Balance of Payments manual, 6th edition (IMF, 2008).

2008 SNA implementation will require long-term period and additional resources. As the SNA is in relations with the other statistical systems (balance of payments statistics, government finance statistics, monetary and financial statistics), a methodological change in one of them leads to after change.

The latter implies that for 2008 SNA implementation will be needed deepen cooperation with the National Statistical Service and boards engaging in other macroeconomic statistical systems, especially with the Ministry of Finance and the Central Bank.

Implementation process will include the following stages;

1. Developing of the long-term national strategic program and action plans.
 - conducting meetings, stating priorities, coordination of the implementation process with the main stakeholders (the Central Bank, Ministry of Finance)
 - developing of the national implementation plan, including it in the strategic program.
 - developing of the action plans (on yearly basis), including compliance of resources and well-defining international technical cooperation needed.
2. Adoption of classifications, improvements of business register, administrative data sources, sampling, IT infrastructure.
3. Improvements of the national accounts compilation according to 2008 SNA and the implementation plan.

All changes foreseen 2008 SNA are placed in Annex 3 of the 2008 SNS' manual (see also NSS official website <http://www.armstat.am/file/doc/99475843.pdf>).